Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Երաժշտություն>> (2 ժամ) և <<Կերպարվեստ>> (2 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 12-ը ներառյալ ամեն օր ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. փետրվարի 16-ին ժամը 13:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն գ. Շիրակ գլխավոր փ. 1-ին փակուղի 44/10:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 31-64-59 հեռախոսահամարով:

ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Դպրոցի տնօրեն՝ Հ. Վարդանյան